ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նուռնուս, (0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 37

## ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 11 հերթական նիստի հետևյալ օրակարգը

1. Նուռնուս գյուղական համայնքի 2016 թվականի տեղական բյուջեի նախագծի քննարկման մասին
2. Նուռնուս գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրային նշանակության, բնակելի կառուցապատման հողերը և շինությունները ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին
3. Նուռնուս գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրային նշանակության, բնակելի կառուցապատման հողը աճուրդ վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին
4. Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 44 -Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Կողմ 4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՂԳԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՍՈՍ ԱԿՈՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նուռնուս, (0222) 6-54-51, nornus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 38

## ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3)կետի պահանջներով և հիմք ընդունելով ավագանու անդամների առաջարկությունները,համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Նուռնուս գյուղական համայնքի 2016 թվականի տեղական բյուջեի նախագծին, որտեղ

| | |
|---|---|
| Եկամտային մասը կազմում է | 16360, 5 դրամ |
| հողի օտարումից եկամուտը՝ | - 2 000, 0 դրամ |
| ծախսային մասը՝ | 18360,5դրամ, որից |
| վարչական մասը | 16 360,5 դրամ |
| ֆոնդային մասը | 2 000,0 դրամ |

2.Հանձնարարել Նուռնուսի գյուղապետարանի աշխատակազմին.

խմբագրել բյուջեի նախագիծը ընդգրկելով ավագանու անդամների կողմից կատարված առաջարկությունները և ներկայացնել ավագանու հաստատմանը:

Կողմ- 4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոռնուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոռնուս, (0222) 6-64-51, nornus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2015թվականի N 39

## ՆՈՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի որոշման հավելվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման հավելվածի 33.1 կետի պահանջներով և 34.2 կետի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ ուղղակի վաճառքի միջոցով, Նոռնուս գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրային նշանակության, բնակելի կառուցապատման,07-051-0112-0035 կադաստրային ծածկագրով, 0.02252հա հողամասը կադաստրային արժեքով՝ 182 412 / հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր տասներկու /դրամ, S=3,44ք.մ. մակերեսով օժանդակ շինությունը՝ 7568/յոթ հազար հինգ հարյուր վաթսունութ/ դրամով, S=39,04ք.մ. մակերեսով ծածկը՝85888 /ութսուն հինգ հազար ութ հարյուր ութսունութ/ դրամ , S=10.23ք.մ. մակերեսով պարիսպը՝ 22506/քսաներկու հազար հինգ հարյուր վեց/ դրամով, ընդամենը՝ 298 374 /երկու հարյուր իննսունութ հազար երեք հարյուր յոթանասունչորս /դրամ արժեքով ինչպես նաև 07-051-0112-0038 ծածկագրով, 0.0079հա հողամասը կադաստրային արժեքով՝ 64071 /վաթսունչորս հազար յոթանասուն մեկ /դրամով, S=59,06ք.մ. մակերեսով ավտոտնակը՝ 129932/հարյուր քսանինը հազար ինը հարյուր երեսուներկու/ դրամով, S=2,08ք.մ. մակերեսով սանհանգույցը՝ 4576 /չորս հազարհինգ հարյուր յոթանասուն վեց/դրամով և , S=2.31ք.մ. մակերեսով պարիսպը՝ 5082/հինգ հազար ութսուներկու/դրամով,ընդամենը՝ 203 661 /երկու հարյուր երեք հազար վեց հարյուր վաթսունմեկ/դրամով օտարել նախապատվության իրավունք ունեցող քաղաքացի Համլետ Պարգևի Անդրեասյանին:

2.Ուժը կորցրած համարել Նոռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի ,,Նոռնուս գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրային նշանակության հողերը և շինությունները ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին,, թիվ 36 որոշումը:

Կողմ- 4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՐՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նուռնուս, (0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 40

### ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1- ին, 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 22-23 կետերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝Նուռնուս գյուղական համայնքի սեփականություն համարվող /սեփականության վկայական N 05112015-07-0019/ բնակավայրային նշանակության, բնակելի կառուցապատման հողատեսքից, 07-051-0128-0024 կադաստրային ծածկագրով, 0,108194հա մակերեսով, ,,Ուրց,, այգեգործական ընկերության 2-րդ թաղամասի, թիվ 91/1 հասցեի հողատարածքը ներկայացնել աճուրդ-վաճառքի՝ մեկնարկային գին սահմանելով 557 000/ հինգ հարյուր հիսուն յոթ հազար /դրամ:

2. Աճուրդի մեկ քայլի չափը սահմանել 5000 / հինգ հազար /դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ՍՈՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Նուռնուս, (0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N 41

## ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով,համայնքի ավագանին որոշում է.

Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Նուռնուս գյուղական համայնքի 2015 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին» թիվ 44-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. ա)3112տողի 11 բաժնի 1-ին խմբի 2-րդ դասի (պահուստային միջոցներ) 4891 հոդվածից 600 000 (վեց հարյուր հազար) դրամ գումար տեղափոխել 2111 տողի, 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4112 (պարգևատրումներ և դրամական խրախուսանքներ) հոդվածին իսկ 140 000 ( հարյուր քառասուն հազար) դրամ տեղափոխել նույն տողի, բաժնի, խմբի, դասի 4111 (աշխատողներին աշխատավարձ և հավելավճարներ) հոդվածին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ- 4 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆ ՍԿՐՏՉՅԱՆ

ՍՈՍ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ